ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐ

2023թ. հունվար- մարտ

Ամփոփ նկարագիր

- 2022 թվականից ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում շատ ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեցին Հայաստան՝ տեխոփոխելով նաև իրենց բիզնեսը, ինչը նպաստել է տնտեսական ակտիվության աճին:

- 2023 թվականի հունվար-մարտին տնտեսական ակտիվության ցուցանիշն աճել է 12.2%-ով:

- 2023 թվականի մարտին հայկական դրամը տարեսկզբից արժևորվել է մոտ 1.3%-ով:

- 2023 թվականի հունվար-մարտի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատականը ցույց է տալիս, որ՝

  - արտահանումն աճել է 2.3 անգամ,

  - ներմուծումն աճել է 89.1%-ով,

  - զբոսաշրջիկների թվաքանակն աճել է 81.2%-ով,

  – միջին աշխատավարձն աճել է 25.3%-ով,

  – ծառայությունների ծավալն աճել է 22.9%–ով,

  – առևտրի ծավալն աճել է 21.2%-ով:

- Հայաստանում 2023 թվականի հունվար-մարտին գնաճը կազմել է 7.2%:

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ
2023թ. հունվար-մարտ, աճողական



Գծապատկեր 2. Աճն ըստ ոլորտների
2023 թ. մարտը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ



Գծապատկեր 3. Աճն ըստ ոլորտների
2022 թ. հունվար-մարտը նախորդ տարվա հունվար–մարտի նկատմամբ



- Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) 2023 թվականի առաջին եռամսյակում դրևորել է աճի միտում կազմելով 12.2%: Ցուցանիշը հունվար-ապրիլից հետո շարունակաբար աճում է:
- **Արդյունաբերություն.** Արդյունաբերական արտադրանքի ծավալը 2023 թվականի հունվար-մարտին կազմել է 556.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 3.6%-ով: Աճին առավելապես նպաստել է մշակող արդյունաբերությունը, որի աճը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է +8.1% համեմատ): Արդյունաբերության աճի վրա բացասաբար են ազդել հանքարդյունաբերության և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և բարձրորակ օդի մատակարարում ոլորտները:
- **Շինարարություն.** Շինարարության արտադրանքը 2023 թվականի հունվար-մարտին կազմել է 64.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 15.6%-ով: Շինարարության աճին հիմնականում նպաստել են կազմակերպչական միջոցներով իրականացված շինարարությունը (աճը՝ 32.4%):
- **Առևտուր.** Ներքին առևտրի ծավալը կազմել է 1007.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 21%-ով: Ներքին առևտրի աճի հիմնական պատճառներից մեկը 2022 և 2023 թվականների ընթացքում ռուսաստանյան ներհոսքն է Հայաստան:
- **Ծառայություններ.** Շրջանառության ծավալը կազմել է 675.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 22.9%-ով: Ծառայության աճին նպաստել են հետևյալ ոլորտների աճերը՝ ֆինանսական և ապահովագրական գործունեությունն՝ 18.5% տրանսպորտ՝ 34.2% և տեղեկատվական և կապը՝ 54,3%՝ Ծառայությունների ոլորտում բարձր աճը կարող է կապված լինել նաև 2023 թվականի առաջին եռամսյակում զբոսաշրջրջիկների աճի և ռուսների հոսքի հետ:

Զբոսաշրջություն

Գծապատկեր 4. Միջազգային զբոսաշրջիկների ժամանումներ



Գծապատկեր 5 Ռուսաստանի զբոսաշրջիկների թիվ



- Հայաստանը 2023 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ զբոսաշրջիկների թվի զգալի աճ է գրանցել:
- 2023 թվականի հունվար-մարտին զբոսաշրջիկների թիվը կազմել է 451.9 հազարի, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 81.2 տոկոսով:
- Զբոսաշրջիկների թվի աճի պատճառներից են.
  - ռուս-ուկրաինական պատերազմը,
  - հայկական սփյուռքի հոսքը:

- Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին է ընկել ամբողջ մուտքերի 52.5%-ը:
- Ելնելով զբոսաշրջիկների թվի աճից՝ ակնկալում ենք, որ ֆինասնական ներհոսքը 2022թ. նույնպես կավելանա մոտ 81%-ով, քանի որ թե՛ զբոսաշրջիկների և թե՛ նրանց կողմից իրականացված ծախսերը համաչափ են Հայաստանի համար:
- Նշենք նաև, որ Ռուսաստանի դեմ պատժամիջոցների և ռուս-ուկրաինական պատերազմի շարունակման հետևանքով 2023 թվականին Ռուսաստանից զբոսաշրջիկների թիվը հսկայական թռիչք է գրանցել: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՌԴ-ից զբոսաշրջիկների թիվն աճել է 2.2 անգամ:

Զբոսաշրջություն



237.0 հազար 2.7 հազար

Ժամանումներ ըստ երկրների

Հունվար–մարտ 2023

451.9 հազար, 81.2% եռամսյակի աճը

Ռուսաստան	237.0 հազար, 2.2x S/S աճ
Վրաստան	53.7 հազար, 2.2x S/S աճ
Իրան	25.5 հազար, 2.2x S/S աճ
Ֆիլիպիններ	6.0 հազար, 2.9x S/S աճ
Ուկրաինա	5.7 հազար, 41.7% S/S աճ
Հնդկաստան	4.8 հազար, 2.2x S/S աճ
ԱՄՆ	4.8 հազար, 22.5% S/S աճ
Բելառուս	3.4 հազար, 20.0% S/S աճ
Ֆրանսիա	2.9 հազար, 22.1% S/S աճ
Գերմանիա	2.8 հազար, 29.2% S/S աճ
Թուրքիա	2.7 հազար, 2.2x S/S աճ

Միջազգային առևտուր. արտահանում

Գծաատկեր 6. Ապրանքների արտահանում
2023թ. հունվար-մարտ, միլիոն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 7. Արտահանում ըստ ապրանքների
2023թ. հունվար-մարտ, մլն ԱՄՆ դոլար



- **Արտահանման ծավալը** 2023թ. հունվար մարտին կազմել է 1664.8 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 929.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.3 անգամ
- Արտահանման աճի հիմնական նպաստող գործոններից մեկն է ռուս-ուկրաինական պատերազմը, քանի որ Ռուսաստանի դեմ պատժամիջոցները Հայաստանի համար արտահանման ահամար նոր շուկաներ բացեցին:
- 2023 թվականի հունվար–մարտի աճին նպաստող հիմնական ապրանքներն են (աճերը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ):
- **Էներգետիկա:** 29.5 մլն ԱՄՆ դոլար, աճը 5 մլն ԱՄՆ դոլար կամ 20.4%:
- **Այլումինի փայլաթիթեղ < 0.2mm:** 30.0 մլն ԱՄՆ դոլար, աճը 4.6 մլն ԱՄՆ դոլար կամ 13.4%:
- **Պլատին մշակված, չմշակված կամ փոշի:** 37.4 մլն ԱՄՆ դոլար, աճը 37.3 մլն ԱՄՆ դոլար կամ 1,891.6 անգամ:
- **Մոլիբդենի հանքաքար և խտանյութեր:** 38.0 մլն ԱՄՆ դոլար, աճը 9.3 մլն ԱՄՆ դոլար կամ 32.5%:
- **Հեռուստացույց:** 64.2մլն ԱՄՆ դոլար աճը 63.6 մլն ԱՄՆ դոլար կամ 93.9x անգամ:
- **Կոնյակ, ռոմ, ջին, օղիլիկյոր.** 64.4 մլն ԱՄՆ դոլար, աճը 24.3 մլն ԱՄՆ դոլար կամ 60.5%:
- **Էլեկտրական ապարատ գծային հեռախոսակապի կամ գծային հեռագրության համար:** 81.1 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 80.8 մլն ԱՄՆ դոլար կամ 275.5x անգամ:
- **Սիգարետ, սիգար և սիգարելներ:** 81.6 մլն ԱՄՆ դոլար աճը 18.5 մլն ԱՄՆ դոլար կամ 29.3%:
- **Պղինձ և պղնձի կոնցենտրատ:** 95.6 մլն ԱՄՆ դոլար աճը 59.7 մլն ԱՄՆ դոլար կամ 38.4%:
- **Ֆեռո–համափուլվածքներ:** 115.6 մլն ԱՄՆ դոլար, աճը 60.4 մլն ԱՄՆ դոլար կամ 109.5%:

Միջազգային առևտուր. արտահանում

Գծապատկեր 8. արտահանման ծավալները ըստ երկրների
2023թ. հունվար-մարտ, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 9.Ապրանքների արտահանումը ըստ տեխնոլոգիական մակարդակի
2023թ. հունվար-մարտ, մլն ԱՄՆ դոլար



- **Ադամանդներ:** 116.6 մլն ԱՄՆ դոլար, աճը 78.9 մլն ԱՄՆ դոլար կամ 3.1 անգամ:
- **Մարդատար ավտոմեքենաներ:** 147.8 մլն ԱՄՆ դոլար, աճը 144.8 մլն ԱՄՆ դոլար կամ 49.5 անգամ:
- **Ոսկի մշակված, կիսամշակված, ոսկու փոշի:** 196.4 մլն ԱՄՆ դոլար, աճը 162.8 մլն ԱՄՆ դոլար կամ 5.8 անգամ:

- **Արտահանման հիմնական գործընկեր երկրներ**
- Հիմանական գործընկեր երկիրն է Ռուսաստանը, որին բաժին է ընկել 2023թ. հունվար– մարտի ընդհանուր արտահանման 46.7%՝ կազմելով 778.5մլն ԱՄՆ դոլար Նախորդ տարվա նույն ժամանակայատավածի համեմատ ծավալն աճել է 592.0 մլն ԱՄՆ դոլարով կամ 4.2 անգամ:
- **Այլ գործընկեր երկրներն են:**
  - **ԱՄԷ:** 2023թ. հունվար–մարտին արտահանումը կազմել է 288.3 մլն ԱՄՆ դոլար, 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 267.1 միլիոն դոլարով կամ 13.6 անգամ: Արտահանման ցուցանիշով ԱՄԷ-ն գտնվում է լավագույն տասնյակում:
  - **Նիդերլանդներ: 2023թ. հունվար–մարտին արտահանումը կազմել է** 100.1 մլն ԱՄՆ դոլար, 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 44.6 մլն ԱՄՆ դոլարով կամ 80.5%–ով:
  - **Չինաստան:** Արտահանումը կազմել է 92.2 մլն ԱՄՆ դոլար, 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 12.1 մլն ԱՄՆ դոլարով կամ 15.1%-ով:

Միջազգային առևտուր. ներմուծում

Գծապատկեր 10. Ապրանքների ներմուծում
2023թ. հունվար-մարտ, մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 13. Ներմուծում ըստ ապրանքների
2023թ. հունվար-մարտ, մլն ԱՄՆ դոլար



- **2023թ. հունվար–մարտին ներմուծումը կազմել է** 2583.8 մլն ԱՄՆ դոլար, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 1217.7 մլն ԱՄՆ դոլար կամ 89.1%:

2023թ. հունվար– մարտի աճին նպաստել են 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ հետևյալ ապրանքների ներմուծման աճերը՝

- **Երկաթից և պողպատից ձողեր.** 20.2 մլն ԱՄՆ դոլար, աճը 11.7 մլն ԱՄՆ դոլար կամ 2.4 անգամ:
- **Տրակտորներ** 20.3մլն ԱՄՆ դոլար, աճը 14.6 մլն ԱՄՆ դոլար կամ 3.6 անգամ:
- **Բուլդոզերներ, գրեյդերներ:** 33.0 մլն ԱՄՆ դոլար, աճը by 13.0 մլն ԱՄՆ դոլար կամ 65.3%:
- **Ապրանքների տեղափոխման տրանսպորտային միջոցներ:** 33.1 մլն ԱՄՆ դոլար, աճը 23.6 մլն ԱՄՆ դոլար կամ 3.5 անգամ:
- **Դեղագործական արտադրանք:** 37.2 մլն ԱՄՆ դոլար, աճը 4.5 մլն ԱՄՆ դոլար կամ 10.7%.
- **Տվյալների ավտոմատ մշակման մեքենաներ և դրանց միավորներ:** 38.7 մլն ԱՄՆ դոլար, աճը 20.0 մլն ԱՄՆ դոլար կամ 107.1%.
- **Հեռուստացույցներ:** 76.9 մլն ԱՄՆ դոլար, աճը 71.2 մլն ԱՄՆ դոլար կամ 13.4 անգամ:
- **Կիսամշակ ոսկի, ոսկու փոշի:** 95.6 մլն ԱՄՆ դոլար, աճը 83.7 մլն ԱՄՆ դոլար կամ 8.1 անգամ:
- **Նավթային յուղեր և բիտումային հանքանյութերից ստացված յուղեր (բացառությամբ հումքի.** 105.5 մլն ԱՄՆ դոլար, աճը 3.3 մլն ԱՄՆ դոլար կամ 3.2%:
- **Ադամանդներ:** 116.0 մլն ԱՄՆ դոլար, աճը 72.1 մլն ԱՄՆ դոլար կամ 2.6 անգամ:
- **Նավթային գազեր և այլ գազային ածխաջրածիններ.** 168.0 մլն ԱՄՆ դոլար, աճը 19.7 մլն ԱՄՆ դոլար կամ 10.5%:
- **Հեռախոսային և հեռահաղորդակցության էլեկտրական սարքավորումներ:** 173.5 մլն ԱՄՆ դոլար, աճը 152.7 մլն ԱՄՆ դոլար կամ 8.3 անգամ:

Միջազգային առևտուր. ներմուծում

Գծապատկեր 12. Ներմուծման ծավալն ըստ երկրների
2023թ. հունվար–մարտ մլն ԱՄՆ դոլար

Աղյուսակ 1: Ներմուծումն ըստ BEC
2023թ. հունվար–մարտ

	Ներմուծում	Տարեկան աճ	
	մլն ԱՄՆ դոլար	մլն ԱՄՆ դոլար	%
Ընդամենը	**2583.3**	**1217.2**	**89.1**
Կապիտալ ապրանքներ	463.8	282.0	155.1
Միջանկյալ ապրանքներ	1156.2	479.9	71.0
Սպառողական ապրանքներ	963.3	455.3	89.6
	Ներմուծման կառուցվածքը		**Աճի կառուցվածքը**
	%		
Ընդամենը	**100.0**		**100.0**
Կապիտալ ապրանքներ	**18.0**		**23.2**
Միջանկյալ ապրանքներ	**44.8**		**39.4**
Սպառողական ապրանքներ	**37.2**		**37.4**

- Ներմուծման առաջնային գործընկեր Ռուսաստանի 2023թ. հունվար–մարտին մասնաբաժինը կազմում է ընդհանուր ներմուծման 25.9՝ կազմելով 668.2 մլն ԱՄՆ դոլար. Վեջինս 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 182.0 մլն ԱՄՆ դոլարով կամ 37.4%–ով:
- Այլ հիմնական գործընկեր երկրներ:
  - **Վրաստան**: 2023թ. հունվար–մարտին ներմուծումը կազմել է 226.6 մլն ԱՄՆ դոլար, աճը 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ 128.0 մլն ԱՄՆ դոլար կամ 2.3 անգամ:
  - **ԱՄՆ:** 2023թ. հունվար–մարտին ներմուծումը կազմել է 208.4 մլն ԱՄՆ դոլար, աճը 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ 156.2 մլն ԱՄՆ դոլար կամ 4 անգամ:
  - **Չինաստան**: 2023թ. հունվար–մարտին ներմուծումը կազմել է 171.2 մլն ԱՄՆ դոլար, աճը 2022թ. նույն ժամանակահատվածի համեմատ 10.8 մլն ԱՄՆ դոլար կամ 6.7%:
- Ըստ «Ապրանքների լայն տնտեսական դասակարգման» (BEC)՝ աճը մեծապես պայմանավորված է միջանկյալ ապրանքների ծավալների ավելացմամբ, որոնք կազմում են ներմուծման ընդհանուր ծավալի 44.8%-ը:
- Վերջնական սպառման ապրանքների ներմուծումը 2023 թվականի հունվար-մարտին կազմել է 963.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 455.3 մլն ԱՄՆ դոլարով կամ 89.6%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է ներքին պահանջարկի ակտիվացմամբ:
- Միջանկյալ ապրանքների ներմուծումը 2023 թվականի հունվար-մարտին կազմել է 1156.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 479.9 մլն ԱՄՆ դոլարով կամ 71.0%-ով:
- Կապիտալ ապրանքների ներմուծումը 2023 թվականի հունվար-մարտին կազմել է 463.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 282.0 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.6 անգամ:

Աշխատանքի շուկա. զբաղվածություն

Գծապատկեր 13. Ֆորմալ զբաղվածություն,
հազար մարդ



- Ֆորմալ զբաղվածությունը 2023 թվականի մարտին կազմել է 706,3 հազար մարդ՝ 2022 թվականի մարտի համեմատ աճելով 51.5 հազարով կամ 7.9 տոկոսով:
- Առևտրի, կրթության և մշակող արդյունաբերության ոլորտները 2023թ. մարտի դրությամբ ունեն ամենաբարձր ցուցանիշները ունեն:
- SS ոլորտում ֆորմալ զբաղվածների թվաքանակը 2023թ. մարտին կազմել է 44.4 հազար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմել է 21.9%:
- 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատ համապատասխանաբար 1%, 1%, և 0.6% նվազում է գրանցվել «առողջապահության և սոցիալական ծառայությունների», «Ֆինանսական և ապահովագրական գործունեության» և «Ծառայության այլ տեսակների» գծով:
- Ամենաբարձր աճը գրանցվել է շինարարության ոլորտում՝ 25.1%
- Ռուս-ուկրաինական հակամարտությունը հանգեցրել է դեպի Հայաստան զբոսաշրջիկների/ներգաղթյալների հոսքի ավելացմանը, ինչը մեծացրել է «Կացության և հանրային սննդի կազմակերպում» ծառայությունների պահանջարկը:
- Պատերազմի պատճառով Հայաստան է ժամանել նաև աշխատուժի նոր խմբաքանակ: Սկսելով բիզնես կամ աշխատանք գտնելով Հայաստանում՝ նրանք նպաստել են բազմաթիվ ոլորտների, հատկապես SS ոլորտի աճին:

Գծապատկեր Ֆորմալ զբաղվածություն (ըստ ոլորտի),
Հազար մարդ



Աշխատանքի շուկա. աշխատավարձ

Գծապատկեր 15. Աշխատավարձ
Ըստ ոլորտների, ՀՀ դրամ



Գծապատկեր 16. Աշխատավարձի աճ, %
Ըստ ոլորտների



- 2023թ. մարտին միջին ամսական աշխատավարձը կազմել է 284,500 դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 25.3%–ով:

Որից՝

- **Գյուղատնտեսություն**: Միջին աշխատավարձը կազմել է 163,100, աճը՝ 20.4%:
- **Ֆինանսական և ապահովագրական գործունեություն:** Միջին աշխատավարձը կազմել է 1,295,000, աճը՝ 7.2%:
- **Տեխնիկական սպասարկման այլ ծառայություններ:** Միջին աշխատավարձը կազմել է 143,000, աճը՝ 14.0%:
- **Շինարարություն:** Միջին աշխատավարձը կազմել է 251,500, աճը՝ 17.1%:
- **Վարչարարական և օժանդակ գործունեություն:** Միջին աշխատավարձը կազմել է 323,000, աճը՝ 12.5%:
- **Մշակույթ, զվարճություններ և հանգիստ:** Միջին աշխատավարձը կազմել է 134,500, աճը՝ 18.4%:
- **Տեղեկատվություն և կապ:** Միջին աշխատավարձը կազմել է 904,000, աճը՝ 30.4%:
- **Առողջապահություն և սոցիալական սպասարկում:** Միջին աշխատավարձը կազմել է 224,000, աճը՝ 10.1%:
- **Մշակող արդյունաբերություն:** Միջին աշխատավարձը կազմել է 208,700, աճը՝ 14.7%:
- **Կրթություն:** Միջին աշխատավարձը կազմել է 143,200, աճը՝ 7.9%–:
- **Մանրածախ և մեծածախ առևտուր:** Միջին ամսական աշխատավարձը կազմել է 180,800, աճը՝ 15.3%

Դրամական փոխանցումներ և փոխարժեք

Գծապատկեր 17. Դրամական փոխանցումների ներհոսք
մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 18. Դրամական փոխանցումներ և ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ հարաբերակցություն



Գծապատկեր 19. ԱՄՆ-ի և Ռուսաստանի ՀՆԱ աճի կանխատեսումները



- 2023թ. հունվար մարտին դրամային ներհոսքը կազմել 1582.5 մլն ԱՄՆ դոլար, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճելով 2.8 անգամ:
- Դրամական փոխանցումների մեծ մասը ստացվել է Ռուսաստանից, որին բաժին է ընկնում տրանսֆերտների մոտավորապես 77.1%-ը: 2023թ. հունվար-մարտին Ռուսաստանից ներհոսքը կազմել է 1219.5 մլն ԱՄՆ դոլար՝ աճը՝ 5,1 անգամ:
- Տրանսֆերտների 9.1%-ը կազմել է ԱՄՆ-ից ստացված փոխանցումները: 2023 թվականի հունվար-մարտին այն կազմել է 143.4 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 0.4%:
- 2023թ. հունվար–մարտին զուտ ներհոսքը կազմել է 553.2 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 2.9 անգամ:
- Ռուս–ուկրաինական հակամարտությունից հետո տրանսֆերտների հոսքը և զուտ ներհոսքը զգալիորեն ավելացել է, ինչը նշանակում է, որ թեև կա շոկային գործոն, այուամենայնիվ տրանսֆերտները չեն նվազում անգամ այն դեպքում, եթե բացառենք պատերազմի հետևանքները:
- Դրամական փոխանցումների ներհոսքը և դրամի փոխարժեքը սովորաբար բացասաբար են փոխկապակցված, սակայն ռուս-ուկրաինական պատերազմից հետո տրանսֆերտների ներհոսքի տատանումները աճել են, ավելին, 2023 թվականին ակնհայտ բացասական հարաբերակցությունը կորցրել է իր օրինաչափությունը:
- ԱՄՀ-ի տնտեսական հեռանկարների համաձայն՝ 2023 թվականին Ռուսաստանը և ԱՄՆ-ը կունենան համապատասխանաբար 1.6% և 0.7% տնտեսական աճ, իսկ 2024թ. համապատասխանաբար 1.1% և 1.3%
- ԱՄՆ-ի և Ռուսաստանի ՀՆԱ-ի դանդաղ և բացասական աճը կարող է չազդել դեպի Հայաստան տրանսֆերտների ներհոսքի վրա, քանի որ ինչպես Ռուսաստանից, այնպես էլ ԱՄՆ-ից ներհոսքի աճը չի դանդաղել՝ չնայած 2022 թվականի տնտեսական իրավիճակին:

ՍԳԻ - Հայաստան և մնացած աշխարհը

Գծապատկեր 20. Գնաճի մակարդակ Աշխարհ, Հայաստան 2023թ. մարտի դրությամբ, %



Գծապատկեր 21. Գնաճի մակարդակ սպառողական գների միջին ժամանակահատվածի փոփոխությունը տոկոսներով



- Ռուս-ուկրաինական պատերազմից հետո Ռուսաստանի դեմ բազմաթիվ պատժամիջոցներ են մտցվել: Ի պատասխան՝ Ռուսաստանը նույնպես պատժամիջոցներ սահմանեց: Այս պատժամիջոցների և պատերազմի արդյունքում COVID-19-ի վերականգնումը դանդաղեց, իսկ Հայաստանում և աշխարհում գնաճի տեմպերը շարունակեցին արագանալ:
- 2023 թվականի մարտի դրությամբ համաշխարհային գնաճը մնում է մտահոգիչ և աճող գործոն: Ընթացիկ տվյալների համաձայն՝ 2023 թվականի մարտի ամիսներին 154 երկրների միջին համաշխարհային գնաճը կազմում է մոտավորապես 12.9%: Սա նշանակում է, որ գրեթե բոլոր երկրները տուժել են գնաճի աճից:
- ՀՀ վիճակագրական կոմիտեի համաձայն՝ Հայաստանում 2023թ. մարտին գնաճը 2022թ. մարտի համեմատ կազմել է 5.4%:
- 2023 թվականի մարտին Հայաստանի գնաճը ցածր է համաշխարհային միջին գնաճի մակարդակից:
- Հայաստանը, թեև իր աշխարհագրական դիրքով, չունի գնաճի այնքան բարձր ցուցանիշ, որքան հարևան երկրները: Գծապատկեր 17-ից կարելի է նկատել, որ մարտին Հայաստանն ունի 4-րդ ամենացածր գնաճը հիմնական առևտրային գործընկեր 11 երկրներից:
- Հայաստանի Կենտրոնական բանկը 2023 թվականի առաջին եռամսյակում չի բարձրացրել իր տոկոսադրույքը. Ավելին, Հայաստանում գնաճի նվազումը ցույց է տալիս, որ տոկոսադրույքը բարձրացնելու մտահոգություն դեռ չկա:

Հայաստանում գների ինդեքսները





- Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2023 թվականի մարտին սպառողական գների ինդեքսը կազմել է 5.4%, իսկ 2023 թվականի հունվար-մարտին՝ 7.2%:
- Սպառողական գների ինդեքսը և արտահանման գների ինդեքսը ողջ 2022 թվականին եղել են համեմատաբար կայուն՝ համեմատելով Հայաստանում գների այլ ինդեքսների հետ
- Հայաստանի ներմուծման գների ինդեքսը 2023 թվականի առաջին եռամսյակում բացասական է եղել:
- Արտադրողների գների ինդեքսը կրճատվել է: 2023 թվականի հունվարին այն կազմել է 1.6%, իսկ 2023 թվականի հունվար-մարտին՝ -0.4%:
- Արտահանման գների ինդեքսը միակ գների ինդեքսն է, որը ցույց է տալիս դրական միտում:
- Շինարարության գների ինդեքսի և սպառողական գների ինդեքսի կուտակային աճերը/նվազումները եղել են համեմատաբար կայուն:
- ՍԳԻ-ն 2023 թվականի փետրվարի 8.1%-ից 2023 թվականի մարտին դարձավ 5.4%, ինչը նշանակում է, որ նկատվում է գնաճի դանդաղում:
- Գտնում ենք, որ 2023 թվականի վերջին Հայաստանում գնաճի մակարդակը կհասնի ՀՀ ԿԲ նպատակային ցուցանիշին.:

Հայաստանում գների ինդեքսները

Գծապատկեր 24. 5 Հիմնական կշիռները ՍԳԻ զամբյուղում, 2023 հունվար–մարտ



Պատկեր 25: Սպառողական գների ինդեքսում 5 առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքախմբեր



- Հայաստանի ՍԳԻ զամբյուղը կազմված է տասներկու հիմնական կատեգորիաներից, որոնցից յուրաքանչյուրը կշռված է ըստ սպառողների կարիքների և առաջնահերթությունների:
- Տասներկու կատեգորիաներն են՝ 1) սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ, 2) անշարժ գույք, ջուր, էլեկտրականություն, գազ և այլ վառելիքներ, 3) առողջապահություն, 4) տրանսպորտ, 5) ալկոհոլային խմիչքներ, 6) հագուստ և կոշիկ, 7) կապ, 8) կահավորանք, կենցաղային տեխնիկա, 9) հանգիստ և մշակույթ, 10) կրթություն, 11) ռեստորաններ և հյուրանոցներ և 12) տարբեր ապրանքներ և ծառայություններ:
- Տեսակարար կշռով ամենաբարձր կշիռ ունեն անշարժ գույքը և սննդամթերքը:
- 2023 թվականի հունվար-մարտ ժամանակահատվածում ՍԳԻ-ի վրա «Սննդամթերքն»-ն ունեցել է ամենաբարձր կշռված գնաճային ազդեցությունը: Այն կազմել է մոտավորապես 3 տոկոսային կետ՝ աճողական 7.2 գնաճի ցուցանիշի պարագայում:

Հայաստանի պարտքն ու բյուջեն

Գծապատկեր 26. Հայաստանի պետական պարտքը



Գծապատկեր 27. Հայաստանի բյուջեի եկամուտները և ծախսերը,
մլն դրամ



- Հայաստանի ընդհանուր պարտքը 2023թ. մարտի վերջի դրությամբ կազմում է 10,899.4 մլն ԱՄՆ դոլար:
- Վերոնշյալից 6,399.8 մլն ԱՄՆ դոլարն արտաքին պարտքն է, ինչը 2022թ. մարտի համեմատ նվազել է 3.7%–ով, իսկ մյուս մասը ներքին պարտքն է, ինչն աճել 66.0%–ով:
- Արտաքին պարտքը կազմված է երկու մասից՝ ՀՀ կառավարության պարտք, որը կազմում է մոտավորապես 91.2% և 2022 թվականի մարտի համեմատ նվազել է 5,4%-ով, և ՀՀ կենտրոնական բանկի պարտք, որը կազմում է մոտ 8,8%, ինչը 2022 թվականի մարտի համեմատ աճել է 18.5%-ով:
- 2023 թվականի հունվար-մարտին Հայաստանի բյուջեի եկամուտները կազմել են 483,578.3 մլն դրամ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 13.7%-ով:
- Սա պայմանավորված է հարկերի և տուրքերի մոտ 15.2%-աճով՝ ինչը կազմել է 461,353.0 մլն դրամ:
- Կառավարության ծախսերը 2023 թվականի հունվար-մարտին աճել են մոտ 6.5%-ով: Պետական ծախսերը բաժանվում են ընթացիկ ծախսերի և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառույթների:
- Ընթացիկ ծախսերն աճել են 8.8%-ով, որը ներառում է պետական հատվածի աշխատողների աշխատավարձերը, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը, տոկոսավճարները, դրամաշնորհները և այլն:
- Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործանությունների ծավալն աճել է 90.1%-ով: